

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի օտար լեզվի (անգլերեն-11 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ), ինֆորմատիկայի (4 դասաժամ), ֆիզիկայի (6 դասաժամ), քիմիայի (6 դասաժամ), կենսաբանության (6 դասաժամ), ՆՁՊ-ի (3 դասաժամ), ֆիզկուլտուրայի (17,5 դասաժամ), տեխնոլոգիայի (երկու խումբ-3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ոսուցչի պաշտոնի համար վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Մրցույթին մասնակցելու համար անձր տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

- 1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
- 2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- 3) անձը հաստատող փաստաթուղթ,
- 4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքուկի պատճենը՝ առկայության դեպքում,
- 5) ինքնակենսագրություն (Ձև 5),
- 6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- 7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքուկ,
- 8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- 9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 23 -ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 30-ին, ժամը 14:00-ին, Սյունիքի մարզի Շվանիձորի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ գ. Շվանիձոր, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, շենք 4:

Չանգահարել (0286) 95-431, 098089202 հեռախոսահամարներով: